



ՍԵՎ ԿԵՐՆԵՆՆԵՐԻ (*TURDUS MERULA*) ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՆ ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐՔԱԶՈՐ ՀԱՍԱՅՆՔՈՒՄ

Վ.Տ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ¹, Լ.Գ. ԱՅԴԻՆՅԱՆ²

¹ԱՀ Բնապահպանության կոմիտե,
²Շուշիի Տեխնոլոգիական համալսարան
luskarapetian@gmail.com

Աշխատանքում Արցախի Հանրապետության Բերքաձորի համայնքի բնական և ուր-
բանիզացված լանդշաֆտներում առաջին անգամ մեր կողմից 2018-2021թթ. ընկած ժամանա-
կահատվածում ուսումնասիրվել են սև կեռնեխների (*Turdus merula*) տարածվածության, բաշխվա-
ծության Էկոլոգիայի, թվաքանակի, կերի կազմի սեզոնային փոփոխությունները: Բացահայտել ենք
փոփոխությունների պատճառները: Կատարված օդակավորման արդյունքներով պարզել ենք
դրանց միգրացիայի ուղիները:

Սև կեռնեխ – Արցախ – պոպուլյացիա – լանդշաֆտ – ուրբանիզացիա – Էկոլոգիա

В данной работе, впервые за 2018-2021 годы, изучены сезонные изменения экологии
распределения, количества и состава кормов черных дроздов (*Turdus merula*), их распреде-
ления в Республике Арцах в природных и урбанизированных ландшафтах Беркадзорского
района. Мы выявили причины изменений, по результатам кольцевания выяснили пути их
миграции.

Черный дрозд – Арцах – популяция – ландшафт – урбанизация – экология

For the first time in the period of 2018-2021 seasonal changes in feed composition,
prevalence, distribution, ecology, quantity of black thrushes (*Turdus merula*) in the natural and
urbanised landscapes of Berqadzor region have been studied. We identified the reason of changes
based of the results of ringing, and the ways of their migration were identified.


Black thrush – Artsakh – population – landscape – urbanization – ecology

Կենսաբանական բազմազանության պահպանության հիմնահարցերը ներկա
Էկոլոգիական տազնապահարույց պայմաններում դառնում են ավելի արդիական: Փաստ
է այն հանգամանքը, որ կենսաբազմազանության քչացումը հանգեցնում է Էկոհամա-
կարգերի կայունության նվազեցման, այդ առումով բնական ռեսուրսների, այդ թվում
նաև կենդանական աշխարհի, ճիշտ կառավարման մեթոդների ընտրության ժամանակ
պետք է հաշվարկել կենսաբազմազանության նվազման հետևանքները: Դա առավել
կարևոր է այսօր Արցախում ստեղծված վիճակում, երբ Ադրբեջանի կողմից սանձա-
զերծված պատերազմում կիրառվել են միջազգային նորմերով արգելված զենքեր, մաս-

Նավորապես սպիտակ ֆոսֆոր, որը խաթարում է թռչունների, մասնավորապես կեռնեխների բնականոն կենսակերպը, հրդեհում և ավերում բնակատեղերը: Թռչունները, օժտված լինելով բարձր լսողականությամբ, պայթյունների ձայներից ենթարկվում են սթրեսի և լքում իրենց դարավոր բնակատեղերը, ինչն էլ հանգեցնում է տվյալ տարածքի կենսաբազմազանության աղբատացման: Թռչունները, մյուս կենդանիների հետ միասին, մեր Էկոհամակարգերի կարևոր բաղադրիչներից են: Արցախում համարյա առկա են բոլոր լանդշաֆտային գոտիները, հարավ-արևելյան հատվածում անապատակիսա-անապատային գոտուց սկսած՝ մինչև հյուսիս-արևմուտքում՝ ձյունամերձ գոտի: Դրանով է պայմանավորված տարածքի հարուստ ու յուրօրինակ կենսաբազմազանությունը, այդ թվում նաև թռչնաֆաունան: Սակայն առայսօր Արցախի օրնիտոֆաունան առհասարակ ուսումնասիրված չէ: Հարավային Կովկասի Հանրապետությունների մեջ Արցախի Հանրապետությունն է, որ օրնիտոլոգիական տեսանկյունով մնում է բաց: Այստեղ տարիներ շարունակ ֆաունիստական գույքագրում չի իրականացվել, ուստի չկան վերջնագրված տվյալներ թռչունների տեսակային կազմի, տարածվածության, Էկոլոգիայի վերաբերյալ: Էկոլոգիական ճգնաժամային երևույթների վերացման միջոցառումների կազմակերպումն անհնար են առանց կենսաբազմազանության, որի բաղադրիչներից և կարևոր խմբերից են թռչունները, հաշվարկի, հիմնախնդիրների լուծման, վերականգնման և կայուն օգտագործման: Այս առումով որպես հետազոտության օբյեկտ ենք ընտրել Արցախի լայնատերև անտառների, թփուտների, բացատների և այգիների օրնիտո-համալիրի տիպիկ ներկայացուցիչ սև կեռնեխներին – *Turdus merula Linnaeus, 1758*:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի համար նյութ են ծառայել 2018 թ.-ից մինչև 2021 թ.-ը ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքածոր համայնքում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Սև կեռնեխների թվաքանակի և բաշխվածության վերաբերյալ տվյալները ստացել ենք երթուղիներում ստանդարտ հաշվարկների ժամանակ [4]: Հաշվարկները կատարել ենք ամիսը երկու անգամ: Ամբողջ ուսումնասիրությունների ընթացքում իրականացվել է ըստ գծանկար 1-ի, և կատարվել է 96 արշավ՝ յուրաքանչյուրը միջինում 7 կմ երկարությամբ, և ամբողջ երթուղու երկարությունը կազմել է 672 կմ: Երթուղու երկարությունը հաշվարկել ենք հեռախոսի Easy Fit թալաչափի ծրագրի միջոցով: Երթուղիները ընտրվել են նախօրոք՝ հաշվի առնելով տեղանքը և ռելիեֆը:

Երթուղիներում հաշվարկային շերտի լայնությունը շարժման ուղղությամբ չի գերազանցել 40-45 մ-ը՝ յուրաքանչյուր կողմում: Բաց տարածքներում սև կեռնեխներ հայտնաբերելու համար օգտագործել ենք հեռադիտակներ: Դիտարկումները կատարել ենք տարվա տարբեր սեզոններին և օրվա տարբեր ժամերին, ինչը կախված է եղել նաև կլիմայական պայմաններից:



Գծանկար 1. 2018-2021 թթ. արշավախմբերի գրաֆիկը

Հաշվարկային երթուղում ընթացքի արագությունը կազմել է 1-1,5 կմ/ժ: Բերքածորում ուսումնասիրությունների ժամանակ առանձնացրել ենք այնպիսի կենսամիջավայրեր, ինչպիսիք են անտառները, թփուտածածկ տարածքները, այգիները, տնամերձ տարածքները: Կենսոլորտի բաշխվածության ուսումնասիրությունների ժամանակ առանձնացրել ենք այն թփերը և ծառատեսակները, որոնց վրա նախընտրում են բնադրել: Կենսոլորտի որսը հիմնականում իրականացրել ենք կենդանորս թակարդներով, ցանցերով ու համապատասխան չափումներից, դիտարկումներից և օդակավորումից հետո ազատ արձակել նույն տարածքում՝ դիմամիկ հավասարակշռությունը պահպանելու համար:

Սև կենսոլորտի կերպաժնի կազմը պարզաբանելու համար հերձման և դիախերման մեթոդով 53 առանձնյակի (այդ թվում նաև անկած) վրա կատարել ենք ստամոքսի և կթնառքի պարունակության ուսումնասիրություն: Տարբեր լանդշաֆտներում ուսումնասիրված սև կենսոլորտի ֆաունայի նմանության գործակիցը հաշվարկել ենք Սերենսենի [9] ինդեքսով՝ $I = 2C / (A+B)$, որտեղ C-ն տեսակների ընդհանուր թիվն է, A-ն և B-ն համեմատվող լանդշաֆտներում կամ շրջաններում տեսակների թիվը: Բերքածորի տարածքում սև կենսոլորտի միգրացիաների հեռավորությունները որոշելու համար օգտագործել ենք այլումինե օդակներ: Զննարկվող ժամանակահատվածում օդակավորել ենք 313 (152♂ և 161♀) սև կենսոլորտ: Ուսումնասիրությունների ընթացքում որսացված կենդանիների ապրելավայրերի աշխարհագրական ցուցանիշները ստույգ որոշելու կամ ծովի մակերևույթից բարձրությունները որոշելու համար օգտագործվել է GPSmap62stc էլեկտրոնավիզացիոն սարքավորումը:

Արդյունքներ և քննարկում: Բերքածորի տարածքում սև կենսոլորտի կարելի է հանդիպել ամենուր՝ լայնատերև անտառներում, թփուտներում, այգիներում, բնակելի տների, ամառանոցների, անասնազոմերի և պահեստների տանիքներում, գերեզմանոցներում: Սակայն ինչքան էլ համարվեն լայն տարածված, այնուամենայնիվ դրանց մոտ նկատվում է տեղանքի նկատմամբ ընտրողականություն, ինչը մեր կարծիքով պայմանավորված է նախընտրելի կերահրապարակներով: Մեր դիտարկումներով սև կենսոլորտի կերահրապարակներում բաշխվածությունը ներկայացնում ենք աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Բերքածորում սև կենսոլորտի բաշխվածությունը կերահրապարակներում


	Կերահրապարակի տիպը	Հանդիպող առանձնյակների քանակը	Հանդիպող առանձնյակների բաժինը, %
1	Անտառների սփռոցներ	117	31,3
2	Թփուտներ	34	9,1
3	Այգիներ	98	26,2
4	Պուրակներ	45	12
5	Ցածրախոտ տարածքներ	29	7,8
6	Գետերի ափեր	51	13,6
	Ընդամենը	374	100

Կերահրապարակում սև կենսոլորտի բաշխվածությունը պայմանավորված է սեզոնայնությամբ: Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ մարտ-ապրիլ ամիսներին սև կենսոլորտի 57-60 %-ը հանդիպում է անտառածածկ ու թփուտածածկ տարածքներում, որտեղ սևվում ու բնադրվում են, ամռանը՝ ճնշող մեծամասնությամբ (60,2-65 %) հանդիպում են բացատների թփուտներում, և արձանագրվում է աստիճանական տեղափոխություն դեպի պտղատու այգիներ: Զննարկվող տարածքում աշնանը հանդիպող կենսոլորտի 68-70%-ը արձանագրվում են բերքատու այգիներում, որտեղ և համարյա ձմեռում են: Ձմռանը, մանավանդ ձյունառատ տարիներին, անտառներում ունենում են ցածր հաճախականություն, այսինքն՝ ձմռանն այս թռչունների սինանթրոպացման աստիճանը բարձրանում է:

Ինչպես Արցախի մյուս վայրերում, Բերքածորի տարածքում ևս սև կենսոլորտը համարվում են նստակյաց տեսակներ: Բնականաբար նստակյացությունը հիմնականում պայմանավորված է տվյալ տեղանքի բարենպաստ պայմաններով: Բերքածորի միջին

բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 615-680 մ, կլիման՝ բարեխառն: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է $+2-3^{\circ}\text{C}$, իսկ ամենատաք ամիսը օգոստոսն է, օդի $+28-30^{\circ}\text{C}$ միջին ջերմաստիճանով:

2018-2021 թթ. դիտարկումներով ակնհայտ երևում է կենտեխների փոփոխվող թվաքանակը, այն փոփոխվում է ինչպես ըստ սեզոնների և լանդշաֆտային բաշխվածության, այնպես էլ ըստ ամիսների: Նման փոփոխությունների պատճառները մեր կարծիքով բազմազան են և պայմանավորված են ձմեռած առանձնյակների քանակով, բնադորման վայրերի նպաստավորությամբ, կերի առատությամբ, բնում ձվերի քանակով, ճտերի կենսունակության ու մահացության աստիճանով, գիշատիչ-զոի փոխհարաբերություններով, իհարկե իրենց ուրույն տեղն ու դերն ունեն նաև կլիմայական պայմանները: Բացի վերը նշված գործոններից, ինչպես բոլոր կենդանիների, այնպես էլ կենտեխների թվաքանակի, տարածվածության վրա իրենց ազդեցությունն են թողնում անթրոպոգեն գործոնները: Պոպուլյացիաների սեզոնային դինամիկայի գնահատումը խոչընդոտում է նրա ոչ լրիվ փակվածությունը: Տեղային բազմազման ժամանակ թվաքանակի ավելացման արդյունքում իրականացվում են տարբեր մասշտաբների տեղափոխություններ: Ըստ ձևի՝ թռչունների բաշխվածության դինամիկան թույլ է տալիս դատել այդ տեղափոխությունների մասին: Տեղային տեղափոխությունները ցույց են տալիս բնական տեղերի փոփոխությունները և թռչունների հայտնվելու բնույթը: Բերքաձորի տարածքում բնական լանդշաֆտներում և ուրբանիզացված տարածքում սև կենտեխների բաշխվածության վերաբերյալ մեր կողմից տարբեր տարիների և սեզոնների ստացված արդյունքները ներկայացվում են համապատասխանաբար գծանկար 2-ում և 3-ում:




Գծանկար 2. Սև կենտեխների բաշխվածությունը բնական լանդշաֆտներում

Ինչպես երևում է գծանկար 2-ից, քննարկվող տարածքի բնական լանդշաֆտներում կատարած երթուղիներում ստացված հաշվարկների արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ սև կենտեխների քանակը բնական լանդշաֆտներում գերակշռում է միայն զարնանային սեզոնին, որը մեր կարծիքով պայմանավորված է բնադորման համար նպաստավոր պայմանների առկայությամբ:

Միաժամանակ այդ մասին է վկայում այն փաստը, որ ուսումնասիրված բների 68,2 %-ը եղել է բնական լանդշաֆտներում: Ուրբանիզացված տարածքներում հակա-

ռակը. սև կեռնեխների քանակն ավելանում է ձմռան, ամռան և աշնան սեզոններին (գծանկար 3): Ամռանն ու աշնանը հիմնականում գերակշռում են պտղատու այգիներում, որը պայմանավորված է կերի կայուն բազայով: Ձմռանն ուրբանիզացված տարածքներում և ագրոլանդաֆոններում բավականին հեշտությամբ են կեր հայթայթում: Գարնանը Բերքածորի ուրբանտարածքում հաշվարկված բները կազմում են 31,8 %-ը, որի 86,3 %-ը՝ այգիներում, իսկ 13,7 %-ը՝ տարբեր տիպի կառույցներում:



Գծանկար 3. Սև կեռնեխների բաշխվածությունը ուրբանիզացված տարածքում

Ինչպես բնական լանդշաֆտներում, այնպես էլ ուրբանիզացված տարածքներում 2020թ. աշնանը այս թռչունների քիչ քանակությունը պայմանավորված է աղբ-բեջանական ագրեսորների կողմից սանձազերծված պատերազմական գործողություններով, որից անմասն չի մնացել նաև Բերքածորի համայնքը:

2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում և տարբեր ամիսներին օդակավորել ենք 313 (152 ♂♂ և 161 ♀♀) առանձնյակ (աղյուսակ 2), ընդ որում անտառներում օդակավորածների թիվը կազմել է 75 (36 ♂♂ և 39 ♀♀), թփուտածածկ տարածքներում՝ 116 (51 ♂♂ և 65 ♀♀), այգիներում՝ 80 (37 ♂♂ և 43 ♀♀), տնամերձ տարածքներում՝ 42 (28 ♂♂ և 14 ♀♀): 2018թ. մարտին անտառային գոտում օդակավորած առանձնյակներից 3 (2 ♂♂ և 1 ♀♀) առանձնյակ 2020թ. հունիսին որսացել ենք Ստեփանակերտ քաղաքում (հեռավորությունը՝ մոտ 12 կմ), 2019 թ. այգիներում օդակավորած առանձնյակներից 9 (3 ♂♂ և 6 ♀♀), 2021թ. կրկին որսացել ենք նույն այգում:

Գարնանն անտառային գոտում ուսումնասիրված տարբեր տեսակների պատկանող 435 առանձնյակների մեջ սև կեռնեխների քանակը կազմել է 112-ը, իսկ նույն սեզոնին ուրբանիզացված տարածքում ուսումնասիրված 246 առանձնյակներից՝ 81-ը: Այսինքն ֆաունայի նմանության գործակիցը կազմել են 0,567: Աշնանը անտառային գոտում ուսումնասիրված տարբեր տեսակների պատկանող 265 առանձնյակներից 52-ը կազմել է կեռնեխները, իսկ այգիներում ուսումնասիրված 250 առանձնյակներից՝ 65-ը, ֆաունայի նմանության գործակիցը կազմել է 0,361:

2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում և տարբեր ամիսների օդակավորել ենք 313 (152 ♂♂ և 161 ♀♀) առանձնյակ (աղյուսակ 2, ընդ որում անտառներում օդակավորածների թիվը կազմել է 75 (36 ♂♂ և 39 ♀♀), թփուտածածկ տարածքներում՝ 116 (51 ♂♂ և 65 ♀♀), այգիներում՝ 80 (37 ♂♂ և 43 ♀♀) տնամերձ տարածքներում՝ 42 (28 ♂♂ և 14 ♀♀): 2018թ. մարտին անտառային գոտում օդակավորած առանձնյակներից

3 (2♂♂ և 1♀♀) առանձնյակ 2020թ հունիսին որսացել ենք Ստեփանակերտ քաղաքում (հեռավորությունը՝ մոտ 12 կմ), 2019 թ. այգիներում օդակավորած առանձնյակներից 9-ը (3♂♂ և 6♀♀) 2021թ.կրկին որսացել ենք նույն այգում:

Աղյուսակ 2. Բերքածորի տարածքում 2018-2022թթ. սև կեռնեխների օդակավորման տվյալները

Ամիսները	Սեռը	2018	2019	2020	2021	Ընդամենը	
						♂♂	♀♀
Հունվար	♂♂	3	2	4	3	12	
	♀♀	5	4	6	2	-	17
Փետրվար	♂♂	-	5	3	5	13	
	♀♀	3	-	5	4	-	12
Մարտ	♂♂	7	-	2	1	10	
	♀♀	4	3	5	4	-	16
Ապրիլ	♂♂	2	4	6	-	12	
	♀♀	-	4	-	5	-	9
Մայիս	♂♂	3	5	-	4	12	
	♀♀	3	5	4	6	-	18
Հունիս	♂♂	-	7	3	3	13	
	♀♀	5	4	6	7	-	22
Հուլիս	♂♂	4	5	3	2	14	
	♀♀	6	4	3	4	-	17
Օգոստոս	♂♂	6	7	5	5	23	
	♀♀	3	-	2	4	-	9
Սեպտեմբեր	♂♂	5	3	-	1	9	
	♀♀	-	6	3	-	-	9
Հոկտեմբեր	♂♂	4	2	-	2	8	
	♀♀	6	3	-	1	-	10
Նոյեմբեր	♂♂	5	2	2	3	12	
	♀♀	3	2	1	-	-	6
Դեկտեմբեր	♂♂	4	3	3	4	14	
	♀♀	6	5	2	3	-	16
Ընդամենը	♂♂	43	45	31	33	152	
	♀♀	44	40	37	40	-	161

Գարնանն անտառային գոտում ուսումնասիրված տարբեր տեսակների պատկանող 435 առանձնյակների մեջ սև կեռնեխների քանակը կազմել է 112-ը, իսկ նույն սեզոնին ուրբանիզացված տարածքում ուսումնասիրված 246 առանձնյակներից՝ 81-ը: Այսինքն՝ ֆաունայի նմանության գործակիցը կազմել է 0,567: Աշնանը անտառային գոտում ուսումնասիրված տարբեր տեսակների պատկանող 265 առանձնյակներից 52-ը կազմել են կեռնեխները, իսկ այգիներում ուսումնասիրված 250 առանձնյակներից՝ 65-ը, ֆաունայի նմանության գործակիցը կազմել է 0,361:

Սև կեռնեխները կերը փնտրում են տարբեր վայրերում: Գարնանը ինչպես անտառներում, թփուտներում, այնպես էլ այգիներում կերը փնտրում են գետնին՝ տերևածածկի տակ՝ նոր ցանքներում, իսկ ամռանն ու աշնանը՝ նաև ծառերի վրա: Ինչպես գրականության տվյալներով [1], այնպես էլ մեր դիտարկումներով կեռնեխներն օգտագործում են մեկ կամ մի քանի կերահրապարակներ: Կերային սուբստրատի կառուցվածքը բնականաբար իր ազդեցությունն է թողնում կեռնեխների կերային բազմազանության վրա և որոշում թռչունների տեղափոխման պայմաններն ու վայրերը:

Ինչպես բնության, այնպես էլ ուրբանիզացված լանդշաֆտներում սև կեռնեխների սննդային օբյեկտները համարյա նույնն են, և կերաբաժնի հիմնական մասը կազմում են

անողնաշարները և պտուղները [2, 3, 5-8, 10]: Մեր դիտարկումներով սև կեռնեխների կերի կազմը ենթարկվում է սեզոնային փոփոխությունների: Գարնանը բնական լանդշաֆտներում ուսումնասիրված 25 (12 ♂♂ և 13 ♀♀) առանձնյակների 75%-ի մոտ կերաբաժնի հիմնական կազմը բաղկացած է եղել տարբեր տեսակի անողնաշարներից, այդ թվում՝ նաև միջատներ, 25%-ի մոտ՝ հատապտուղների սերմեր և հատիկներ, պտղի մնացորդներ: Ամռանը ուսումնասիրված 28 առանձնյակների (12 ♂♂ և 16 ♀♀) 32,1%-ի մոտ արձանագրել ենք հիմնականում հատիկային կերեր, 39,3%-ի մոտ՝ հատապտուղների և մրգերի մնացորդներ, իսկ 28,6 %-ի մոտ՝ միջատներ, սերմեր, մրգեր, հատապտուղներ: Աշնանը այս թռչունների կերաբաժնի գերակշռող մասը կազմում են մրգերը և պտուղները, ձմռանը կերաբաժինը լինում է խառը: Ուրբանիզացված տարածքներում, կոնկրետ Բերքաձորի համայնքում, սև կեռնեխների կերաբաժնին ավելանում է նաև անթրոպոգեն ծագման մնուկներ: Տարվա տարբեր սեզոններին դրանց կարելի է հայտնաբերել տարբեր տիպի աղբավայրերում:

Տարբեր տարիների և սեզոնների բնակատեղերի դիտարկումներով պարզել ենք, որ ջնայած սև կեռնեխներն արեալի սահմաններում ունեն լայն տարածվածություն, այնուամենայնիվ ունենում են նաև նախընտրելի վայրեր, որոնք կարող են կրել նաև սեզոնային բնույթ, ինչը պայմանավորված է նախընտրելի տարածքներում կերի առատությամբ և նպաստավոր պայմաններով: Այսպես անտառային թաղիքներում և թփուտներում սնվում են մեր ուսումնասիրած կեռնեխների 40,4 %-ը, այգիներում՝ 26,2 %-ը, գետափերում՝ 13,6 %-ը: Պուրակներում և ցածրախոտ տարածքներում այս տեսակի քանակը կազմել է համապատասխանաբար՝ 12 և 7,8 % (աղ. 1): Ամռան, աշնան և ձմռան (մանավանդ ձյան խոր շերտերի դեպքում) կեռնեխների քանակությունն ավելանում է ուրբանիզացված տարածքներում (գծանկար 3): Ինչպես ցույց են տալիս դիտարկումները, կենդանական ծագման կերերի քանակը տարվա ընթացքում սահուն փոփոխվում է, ինչն էլ դրդում է այս թռչունների կերաբաժնի սեզոնային փոփոխություններին և արեալի սահմաններում տեղափոխություններին:

Ինչպես բոլոր մյուս կենդանիների, կեռնեխների մոտ ևս պոպուլյացիայում տեղի են ունենում թվաքանակի փոփոխություններ, որի պատճառները տարաբնույթ են: Մեր դիտարկումներով սև կեռնեխների թվաքանակի վրա բացասական է ազդում երկարատև և ձյան խոր շերտով ձմեռը, երբ կերի հայթայթումը դառնում է դժվար կամ անհնար, բնադրման ժամանակ ջերմաստիճանի կտրուկ տատանումները, թփուտների, անտառների հրդեհումները, լայնածավալ անտառահատումները: Վերջին տարիներին սև կեռնեխների թվաքանակի վրա իր բացասական ազդեցությունն է թողել Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմը, որի ընթացքում օգտագործվել են միջազգային նորմերով արգելված զենքեր, այդ թվում նաև սպիտակ ֆոսֆոր: Մեր դիտարկումներով սև կեռնեխների առավելագույն թվաքանակն արձանագրել ենք հետքնային շրջանում, որը համընկնում է հուլիս-օգոստոս ամիսներին, երբ սկսվում է ճուղի և սեռահասունների զանգվածային թռիչքը:

Առայսօր հետ որսացված օդակավորված առանձնյակները հնարավորություն են տալիս դատելու այս թռչունների միգրացիաների մասին, որն արեալի սահմանում կազմում է մոտ 12 կմ, իսկ նստակյացների մոտ չի գերազանցում 2-3 կմ-ը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Барановский А.В.* Механизмы экологической сегрегации домового и полевого воробьев: дис. ... канд. биол. наук. Рязань, 178 с., 2004.
2. *Березанцева М.С.* Питание гнездовых птенцов чёрного дрозда *Turdus merula* и сравнение его с питанием птенцов певчего дрозда *T. philomelos* в 157 лесостепной дубраве "Лес на Ворскле". М.С. Березанцева. Русский орнитологический журнал, 20, 6, с. 12-20, 1997.

3. *Мальчевский А.С.* Методика прижизненного изучения питания гнездовых птенцов насекомоядных птиц. А.С. Мальчевский, Н.П. Кадочников. Зоологический журнал, 2, 32., с. 277-282, 1953.
4. *Новиков Г.А.* Полевые исследования по экологии наземных позвоночных. 2-е изд., испр. и доп. М., Советская наука, 503 с., 1953.
5. *Прокофьева И.В.* Сравнение питания дроздов – деряб *Turdus viscivorus* в разных местах, сильно удаленных друг от друга. И.В. Прокофьева. Русский орнитологический журнал, № 16. Экспресс-выпуск 340, с. 45-49, 2007.
6. *Прокофьева И.В.* Моллюски в пище воробьиных птиц и дятлов. И.В. Прокофьева. Русский орнитологический журнал, № 17, Экспресс-выпуск 405, с. 375-379, 2008.
7. *Симкин Г.Н.* Певчие птицы: справочное пособие. Г.Н. Симкин. М., Лесная пром-сть, 399 с., 1990.
8. *Шукишина М.С.* Особенности кормового поведения черного дрозда *Turdus merula* L. В Калининграде. Вестник МГОУ. Серия: Естественные науки, с. 41-48, 2015.
9. *Serensen T.* A Method of Establishing Groups of Equal Amplitude in Plant Sociology Based on Similarity of Species Content and Its Application to Analyses of the Vegetation on Danish Commons. Biologiske Skrifter, 1-34, 1948.
10. *Stephan B.* Die Amsel: *Turdus merula*. B. Stephan. Berlin: Die Neue Brehm-Bücherei: Hohenwarsleben: Westarp-Wiss., Bd. 95, 258 s., 1999.

Ստացվել է 29.04.2022